ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-18/39-2»

ք. Երևան «22» 06 2018 թ.

ՀՀ մշակույթի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար՝ Ս. Մուրադյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ԻՍԱԽԱՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Իսախանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ՝ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Ընտել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **2 662 000 /երկու միլիոն վեց հարյուր վաթսուներկու հազար/ ՀՀ դրամ**: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **365 օրացուցային** օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները[1]:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար

---

[1] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխիքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից*

գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության

օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է՝ ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի **կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ** պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ մշակույթի նախարարություն Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական շենք N 2, հեռ.՝ 011 58-51-78 ՀՎՀՀ 02508054,հ/հ 900011012896 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում	«ԻՍԱԽԱՆ» ՍՊԸ Հասցեն՝ք. Երևան,Ներքին Շենգավիթ, 11փ.,1շ., 20բ. «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ հեռ.՝ 093 65 21 15 էլ. փոստ՝ Arshak.isakhanyan@mail.ru ՀՎՀՀ 02258107 հ/հ 16048255941800
Աշխատակազմի ղեկավար՝ _____ Ս. Մուրադյան (ստորագրություն)	Տնօրեն՝ _____ Ա. Իսախանյան (ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավել

«22» 06 2018 թ. կնքվ

«ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-18/39-2» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
հրա-վերով նախա-տեսված չափա-բաժնի համարը	գնումների պլանով նախա-տեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգ-ման (CPV)	անվանումը և ապրան-քային նշանը	արտադրողի անվանումը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհա-նուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը* Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարա-րության կողմից հաշվառվելուց հետո մինչև 01.12.2018թ.
5	37311350-1	Թավջութակ 1/4 /Սոնատա 1446/	Չինաստան /Սոնատա/	Ջութակի ընտանիքի բաստ-տենորային ռեգիստրի լարային աղեղնավոր դա-սական նվագարան: Ունի 4 լար, լարվածքը կվինտային է (մեծ օկտավայի դո և սոլ նոտաներ, փոքր օկտավայի ռե և լյա նոտաներ): Գործիքի դեկաները փայտյա (վերևի դեկան՝ եղևնու, ներքևինը՝ թխկենու): Լարերի բարձրությանը համապա-տասխանեցրած և տեղադրված հենակով: Դեկաների եզրերի կանթեղը (ucuk) զույգ սև փայտերից: Չափը՝ 1/4, աղեղով: Մատակարարվող ապրանքը պետք է լինի գործարանային արտադրության՝ համա-պատասխան մոդելի նշումով: Գործիքը և պատյանը՝ նոր, չօգտագործված:	հատ	130 000	390 000	3	Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ք. Երևան, Եզնիկ Կողբացու փ. 36 շենք, «Երևանի Չայկովսկու անվան երաժշտական դպրոց» հասցեում	3	IV-րդ եռամսյակ, մինչև 01.12.2018թ.

6	37311350-2	Թավջութակ 2/4 /Սոնատա 1445/	Չինաստան /Սոնատա/	Ջութակի ընտանիքի բասատենորային ռեգիստրի լարային աղեղնավոր դասական նվագարան: Ունի 4 լար, լարվածքը կվինտային է (մեծ օկտավայի դո և սոլ նոտաներ, փոքր օկտավայի ռե և լյա նոտաներ): Գործիքի դեկաները փայտյա (վերևի դեկան՝ եղևնու, ներքևինը՝ թխկենու): Լարերի բարձրությանը համապատասխանեցրած և տեղադրված հենակով: Դեկաների եզրերի կանթեղը (усик) լինի զույգ սև փայտերից: Չափը՝ 2/4, աղեղով: Մատակարարվող ապրանքը պետք է լինի գործարանային արտադրության՝ համա-պատասխան մոդելի նշումով. Գործիքը և պայմանը՝ նոր, չօգտագործված:	հատ	155 000	465 000	3	Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ք. Երևան, Եզնիկ Կողբացու փ 36 շենք, «Երևանի Չայկովսկու անվան երաժշտական դպրոց» հասցեում	3	IV-րդ եռամսյակ, մինչև 01.12.2018թ.
7	37311350-3	Թավջութակ 3/4 /Սոնատա 1444/	Չինաստան /Սոնատա/	Ջութակի ընտանիքի բասատենորային ռեգիստրի լարային աղեղնավոր դասական նվագարան: Ունի 4 լար, լարվածքը կվինտային է (մեծ օկտավայի դո և սոլ նոտաներ, փոքր օկտավայի ռե և լյա նոտաներ): Գործիքի դեկաները փայտյա (վերևի դեկան՝ եղևնու, ներքևինը՝ թխկենու): Լարերի բարձրությանը համա-պատասխանեցրած և	հատ	160 000	320 000	2	Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ք. Երևան, Եզնիկ Կողբացու փ 36 շենք, «Երևանի Չայկովսկու անվան երաժշտական դպրոց» հասցեում	2	IV-րդ եռամսյակ, մինչև 01.12.2018թ.

				տեղադրված հենակով: Դեկաների եզրերի կանթեղը (усик) լինի զույգ սև փայտերից: Չափը՝ 3/4, աղեղով: Մատակարարվող ապրանքը պետք է լինի գործարանային արտադրության՝ համա-պատասխան մոդելի նշումով: Գործիքը և պատյանը՝ նոր, չօգտագործված:						
14	37311580-3	Քամանչա /Վարպետի ձեռքի աշխատանք/	<< /«ԻՍԱԽԱՆ» ՍՊԸ/	Հայկական ազգային լարային-աղեղնավոր նվագարան: Պատրաստ-վում է ընկուզենու կամ ծիրանենու փայտից: Ունի գմբեթաձև իրան, թաղանթե մեմբրան (ծկան կամ հորթի կաշի), մետաղյա ձող (ոտք), փայտե աղեղ (ձիու պոչի սպիտակ մազերից), լարվածքը կարգավորող 4 ականջ, 2 հենակ (մեծը՝ հաճարենու կամ թխկենու փայտից, փոքրը՝ էբոնիտից): Գործիքն ունի 4 լար (պողպատյա). Ձայնա-ծավալը՝ 3 օկտավա՝ փոքր օկտավայի «մի» նոտայից մինչև 3-րդ օկտավայի «լյա» նոտա: Գործիքի չափսերն են՝ իրանի լայնությունը՝ 20-21 սմ, բարձրությունը՝ 17-19 սմ: Իրանի թաղանթի դիամետրը՝ 12 սմ: Կոթի երկարությունը՝ 30 սմ: Գլխիկի երկարությունը՝ 13 սմ: Ձեռքի աշխատանք: Համերգային: Գործիքը և պատյանը՝ նոր, չօգտագործված.	հատ	103 000	206 000	2	Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ք. Երևան, Եզնիկ Կողբացու փ. 36 շենք, «Երևանի Չայկովսկու անվան երաժշտական դպրոց» հասցեում	2	IV-րդ եռամսյակ, մինչև 01.12.2018թ.

17	37311580-6	Զուռնա /Վարպետի ձեռքի աշխատանք/	ՀՀ /«ԻՍԱԽԱՆ» ՍՊԸ/	Հայկական ազգային փողային նվագարան. Իրենից ներկայացնում է փայտե փող, որը ծայրում ավելի լայն է: Պատրաստվում է ծիրանենու փայտից, 30 սմ երկարությամբ. Տեսակը՝ in B: Բաղկացած է մետաղյա մունդշտուկից (միլ) և փոքրիկ եղեգնաղամիշից: Ձեռքի աշխատանք: Համերգային: Գործիքը և պատյանը՝ նոր, չօգտագործված:	հատ	23 000	23 000	1	Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ք. Երևան, Եզնիկ Կողբացու փ 36 շենք, «Երևանի Չայկովսկու անվան երաժշտական դպրոց» հասցեում	1	IV-րդ եռամսյակ, մինչև 01.12.2018թ.
18	37311580-7	Քամանի /Վարպետի ձեռքի աշխատանք/	ՀՀ /«ԻՍԱԽԱՆ» ՍՊԸ/	Հայկական ազգային լարային-աղեղնավոր նվագարան: Ունի նեղ ուղղանկյուն իրան, փայտե ծածկ, կարճ թևակ (գրիֆ), գլանաձև գլխիկ, լարերը կարգավորող 4 ականջ, 4 մետաղալար, աղեղ: Ներքևի դեկան պատրաստվում է տանձենու, ընկույզենու, խնձորենու փայտերից, վերևի դեկան՝ եղևնու փայտից: Ձայնաձավալը՝ 2,5 օկտավա: Դեկաների երկարությունը 35-42 սմ, լայնքը՝ 12-17 սմ, բարձրությունը՝ 6-9 սմ. Ձեռքի աշխատանք՝ Համերգային: Գործիքը և պատյանը՝ նոր, չօգտագործված:	հատ	105 000	210 000	2	Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ք. Երևան, Եզնիկ Կողբացու փ. 36 շենք, «Երևանի Չայկովսկու անվան երաժշտական դպրոց» հասցեում	2	IV-րդ եռամսյակ, մինչև 01.12.2018թ.

19	37311580-8	Թառ /Վարպետի ձեռքի աշխատանք/	ՀՀ /«ԻՍԱԽԱՆ» ՍՊԸ/	Հայկական ազգային լարային կսմիթային նվագարան. Ունի երկխոռոչ ութաձև արձագանքարան. թև, քառանկյուն գլխիկ, 11-12 մետաղալար, մեծ հենակ փառի վրա, փոքր հենակ արձագանքարանի և վզիկի հպման մասում, բաս ճինգերի 2 հենակ թևի միջին հատվածում, 20-23 լադ, լարվածքը կարգավորող 6 մեծ և 3 փոքր ականջ, կախիչ արձագանքարանի ստորին մասում: Արձագանքարանը սնամեջ է, թթենու փայտից, թևակը ոսկորից կամ էբոնիտից, մետաղալարերը պողպատ կամ պղինձ, հպանը՝ էբոնիտ՝ Ձեռքի աշխատանք: Համերգային: Գործիքը և պատյանը՝ նոր, չօգտագործված:	հատ	113 000	339 000	3	Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ք. Երևան, Եզնիկ Կողբացու փ. 36 շենք, «Երևանի Չայկովսկու անվան երաժշտական դպրոց» հասցեում	3	IV-րդ եռամսյակ, մինչև 01.12.2018թ.
20	37311580-9	Բամբիռ մեծ /Վարպետի ձեռքի աշխատանք/	ՀՀ /«ԻՍԱԽԱՆ» ՍՊԸ/	Հայկական ազգային լարային-աղեղնավոր նվագարան: Ձայնաձավալը՝ մեծ օկտայի դո և սոլ, փոքր օկտավի ռե և լյա: Ունի 4 լար, աղեղ: Դեկաների երկարությունը՝ 75-80 սմ, լայնությունը՝ 45-48 սմ, բարձրությունը՝ 10-14 սմ: Ներքևի դեկան պատրաստվում է թխկենու, ընկույզենու և այլ փայտերից, վերևի դեկան՝ եղևնու փայտից: Ձեռքի աշխատանք: Համերգային: Գործիքը և պատյանը՝ նոր, չօգտագործված:	հատ	205 000	410 000	2	Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ք. Երևան, Եզնիկ Կողբացու փ. 36 շենք, «Երևանի Չայկովսկու անվան երաժշտական դպրոց» հասցեում	2	IV-րդ եռամսյակ, մինչև 01.12.2018թ.

21	37311580-10	Բամբիռ (փոքր) /Վարպետի ձեռքի աշխատանք/	ՀՀ /«ԻՍԱԽԱՆ» ՍՊԸ/	Հայկական ազգային լարային-աղեղնավոր նվագարան: Ձայնածավալը՝ փոքր օկտայի սոլ մինչև երկրորդ օկտավայի մի. Ունի 4 լար, աղեղ: Դեկաների երկարությունը՝ 42-46 սմ, լայնությունը՝ 25-27 սմ, բարձրությունը՝ 7-9 սմ. Ներքևի դեկան պատրաստվում է թխկենու, ընկույզենու և այլ փայտերից, վերևի դեկան՝ եղևնու փայտից: Ձեռքի աշխատանք: Համերգային: Գործիքը և պատյանը՝ նոր, չօգտագործված:	հատ	100 000	100 000	1	Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ք. Երևան, Եզնիկ Կողբացու փ. 36 շենք, «Երևանի Չայկովսկու անվան երաժշտական դպրոց» հասցեում	1	IV-րդ եռամսյակ, մինչև 01.12.2018թ.
22	37311580-11	Սրինգ /Վարպետի ձեռքի աշխատանք/	ՀՀ /«ԻՍԱԽԱՆ» ՍՊԸ/	Հայկական ազգային փողային նվագարան. Պատրաստվում է ծիրանենու փայտից. Ունի սնամեջ փող՝ ներքևից բաց և վերևից հորիզոնական բացվածքով, ձայնային փչանցք, 7 դիմային և 1 օժանդակ ձայնանցք: Ձայնածավալը՝ 3 օկտավա: Ձեռքի աշխատանք: Համերգային: Գործիքը և պատյանը՝ նոր, չօգտագործված:	հատ	25 000	50 000	2	Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ք. Երևան, Եզնիկ Կողբացու փ. 36 շենք, «Երևանի Չայկովսկու անվան երաժշտական դպրոց» հասցեում	2	IV-րդ եռամսյակ, մինչև 01.12.2018թ.
23	37311580-12	Դուդուկ /Վարպետի ձեռքի աշխատանք/	ՀՀ /«ԻՍԱԽԱՆ» ՍՊԸ/	Հայկական ազգային փողային նվագարան: Պատրաստվում է ծիրանենու փայտից. Փողի երկարությունը՝ 30- 35 սմ: Այն ինքնին սնամեջ շվի է, ունի 8 դիմային ձայնանցք և 1 կամ 2 օժանդակ ձայնանցք ներքևի մասում: Բաղկացած է եղեգից պատրաստված կրկնակի	հատ	14 000	84 000	6	Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ք. Երևան, Եզնիկ Կողբացու փ. 36 շենք, «Երևանի Չայկովսկու անվան երաժշտական դպրոց» հասցեում	6	IV-րդ եռամսյակ, մինչև 01.12.2018թ.

				յեզվակավոր մունդշտուկից Տեսակը՝ A Ձեռքի աշխատանք Համերգային. Գործիքը և պատյանը՝ նոր, չօգտագործված						
24	37311580-13	Շվի /Վարպետի ձեռքի աշխատանք/	ՀՀ /«ԻՍԱԽԱՆ» ՍՊԸ/	Հայկական ազգային փողային նվագարան՝ Պատրաստվում է ծիրանենու փայտից՝ Ունի սնամեջ փող՝ Ունի 7 դիմային և 1 օժանդակ ձայնանցք: Ձայնածավալը առաջին օկտավի «ռե» նոտայից մինչև երրորդ օկտավայի «մի» նոտա: Լարվածքը՝ in C: Ունի 29-31 սմ երկարություն՝ Ձեռքի աշխատանք՝ Համերգային՝ Գործիքը և պատյանը՝ նոր, չօգտագործված.	հատ	13 000	65 000	5	Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ք. Երևան, Եզնիկ Կողբացու փ. 36 շենք. «Երևանի Չայկովսկու անվան երաժշտական դպրոց» հասցեում	5	IV-րդ եռամսյակ, մինչև 01.12.2018թ.

**Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում՝ Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

ԳՆՈՐԴ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական շենք N 2,
հեռ.՝ 011 58-51-78
ՀՎՀՀ 02508054,հ/հ 900011012896
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչությունում

Աշխատակազմի ղեկավար՝

_____ Ս. Մուրադյան
(ստորագրություն)

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«ԻՍԱԽԱՆ» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երևան,Ներքին Շենգավիթ, 11փ.,1շ., 20բ.
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
հեռ.՝ 093 65 21 15
էլ. փոստ՝ Arshak.isakhanyan@mail.ru
ՀՎՀՀ 02258107
հ/հ 16048255941800

Տնօրեն՝

_____ Ա. Իսախանյան
(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 2

«22» 06 2018 թ. կնքված

«ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-18/39-2» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի						
Իրավերով նախա-տեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*			
			հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
5	37311350-1	Թավջութակ 1/4	390 000	390 000	390 000	**390 000**
6	37311350-2	Թավջութակ 2/4	465 000	465 000	465 000	**465 000**
7	37311350-3	Թավջութակ 3/4	320 000	320 000	320 000	**320 000**
14	37311580-3	Քամանչա	206 000	206 000	206 000	**206 000**
17	37311580-6	Զուռնա	23 000	23 000	23 000	**23 000**
18	37311580-7	Քամանի	210 000	210 000	210 000	**210 000**
19	37311580-8	Թառ	339 000	339 000	339 000	**339 000**
20	37311580-9	Բամբիռ (մեծ)	410 000	410 000	410 000	**410 000**
21	37311580-10	Բամբիռ (փոքր)	100 000	100 000	100 000	**100 000**
22	37311580-11	Սրինգ	50 000	50 000	50 000	**50 000**
23	37311580-12	Դուդուկ	84 000	84 000	84 000	**84 000**
24	37311580-13	Շվի	65 000	65 000	65 000	**65 000**
Ընդամենը			**2 662 000**	**2 662 000**	**2 662 000**	**2 662 000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են անողական կարգով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական շենք N 2,
հեռ.՝ 011 58 51-78
ՀՎՀՀ 02508054,հ/հ 900011012896
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչությունում

Աշխատակազմի ղեկավար՝

Ս. Մուրադյան
(ստորագրություն)

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«ԻՍԱԽԱՆ» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երևան,Ներքին Շենգավիթ, 11փ ,1շ., 20բ
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
հեռ.՝ 093 65 21 15
էլ. փոստ՝ Arshak.isakhanyan@mail.ru
ՀՎՀՀ 02258107
հ/հ 16048255941800

Տնօրեն՝

Ա. Իսախանյան
(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 3

«11» 06 2018 թ. կնքված

«ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-18/39-2» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատակարարված ապրանքների					
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց՝	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1

«22» 06 2018 թ. կնքված

«ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-18/39-2» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____ _____ .
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն